ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**22.11.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/7-2019-3-ԴԲԳԳԿ-2» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք.Երևան «27» «11» 2019թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի և «Բարսիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Մենեմշյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/7-2019-3-ԴԲԳԳԿ-2 գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.15-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/7-2019-3-ԴԲԳԳԿ-2» գնման պայմանագրի շրջանակներում հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց) համաձայն կից հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/7-2019-3-ԴԲԳԳԿ-2» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Ապրանքների մատակարարումն իրականացվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ միանվագ մինչև 15.12.2019թ.:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ | «Բարսիս» ՍՊԸ |
| Հասցե ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1 | Հասցե ք.Երևան, Արշակունյաց 57/2 |
| Գանձապետարան | Բանկ՝ էյչ էս Բի Սի բանկ Հայաստան ՓԲԸ |
| h/h 900018001975 | h/h՝ 217001172089001 |
| ՀՎՀՀ – 00405431 | ՀՎՀՀ –02230504 |
| Տնօրեն՝ Մ.Ս.Բիշարյան | Տնօրեն՝ Հ.Մենեմշյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |